

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *օ*.**

- 1) տն-րհներք, ցայս-ր, արճճագ-ծ, բաց-թյա
- 2) մի-րիմակ, ան-րենն, միջ-րե, ն-րեկ
- 3) մեր-րյա, տն-րիմեկ, վեհ-րենն, կես-ր
- 4) նախ-րյակ, ջրվ-ր, բար-րություն, օրե-ր

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի/բառաձևերի/ բաց թողած տեղում է գրվում *ց*.**

- 1) պախուր-, կ-կտուր, անդամալույ-, լվա-ք
- 2) կաթնահուն-, հայա-ք, ան-կալի, սրդողա-
- 3) հինավուր-, հանդիպակա-, մոլու-ք, որ-կալ
- 4) ճրագալույ-, դյու-ազն, դեղնու-, մտա-ածին

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *ւ*.**

- 1) հար-ան, ազ-ազ, տ-ական, տեր-աթափ
- 2) ոսկ-որեկ, ոսկ-արս, պարթ-, գոտ-որ
- 3) հոգ-որ, իջ-անեկ, սերկ-իլ, կար-որ
- 4) հոգ-իճակ, թեպետ-, օթ-ան, բ-եռեկ

4 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *յա*.**

- 1) գործուն-, եղ-մ, բամ-, հնգամ-կ
- 2) լռել-յն, դաստ-րակ, Եպրաքս-, ման-կ
- 3) Մար-մ, խարտ-շ, կղզ-կ, առօր-
- 4) Վոլոդ-, Վիլ-մ, Արաքս-, բար-ցակամ

5 **Շարքերից քանիստ՞ում ուղղագրական սխալ կա.**

- ա) դափնեվարդ, հափշտապ, հափշտակել, ժայռակոփ
- բ) ծոպավոր, խոպան, ծպծպալ, սեպուհ
- գ) շամբուտ, դարբին, միչև, սրտատրոփ
- դ) ճամպրուկ, ըմբշամարտ, սփրտնել, դափնի

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) բոլորում
- 4) երկուսում

6 **Ո՞ր շարքի բոլոր բառերում է թավ գրված *ե* -ն արտասանվում *է*.**

- 1) գետեզր, վերելք, վրաերթ, նորեկ
- 2) աներես, մակերիկամ, շաքարեղեգ, ինքնատե
- 3) համերկրացի, նախերգանք, հորեղբայր, նախօրե
- 4) որևիցե, կիսանեփ, տիեզերք, գրեթե

73 **Բառարանագրության վերաբերյալ պնդումներից որոնցո՞ւմ սխալ կա.**

- 1) Բացատրական բառարաններում տրվում է բառի ստուգաբանությունը, ծագումը, առնչությունը այլ լեզուների հետ, բառի բացատրությունը:
- 2) Բառարանները բաժանվում են երկու մեծ խմբի՝ հանրագիտական և բանասիրական:
- 3) Հանրագիտական բառարաններ են «Հայկական սովետական հանրագիտարանը», Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», Էդ. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանը»:
- 4) Բացատրական բառարաններ են Մ. Մերաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի», Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան», Հր. Աճառյանի «Արմատական բառարան» աշխատությունները:
- 5) Բարբառային բառարաններ չեն լինում:

74 **Տրվածներից որո՞նք են սխալ Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների վերաբերյալ:**

- 1) «Համբերանքի չիբուխը» պատմվածքում Օհան ամին կյանքի դառը դասերից հետո այլևս ոչ մեկին չի վստահում՝ կասկածելով անգամ շան հավատարմությանը:
- 2) «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծության մեջ հեղինակը հավատում է իրեն անսահման քնքշանք ու երջանկություն պարգևած սիրած աղջկան:
- 3) «Աբու-Լալա Մահարի» պոեմում հեղինակը նաև զուգահեռներ է անցկացնում հայ և արաբ ժողովուրդների միջև՝ չարացած խոսելով իր ազգին այդքան թշվառություններ պատճառած աշխարհի դեմ:
- 4) «Հայրենիքիս» («Յորենի ծփուն արտերի եզրին») բանաստեղծության մեջ հեղինակը հպարտությամբ հիշեցնում է իր հայրենիքի փառավոր անցյալի մասին՝ երախտագիտության խոսքեր ուղղելով հայրենի քաջերին:

75 **Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը *ճիշտ է, սխալ է, չգիտեմ* բառերով:**

- 1. Հոգնակի արգելական հրամայականը կազմվում է *միք* մասնիկով:
- 2. Հրամայական եղանակը ունի միայն մեկ դեմք և մեկ ժամանակ:
- 3. Դրական հրամայականը պարզ ժամանակաձև է, արգելականը՝ բաղադրյալ:
- 4. Հայերենում կանոնավոր բայերի եզակի հրամայականը ունի երեք տիպի վերջավորություններ՝ *իր, ա, ու*:
- 5. Անկանոն բայերը հրամայական եղանակում անկանոնություն են դրսևորում:
- 6. Հարադրավոր բայերի արգելական հրամայականի *մի* մասնիկը դրվում է հարադիրի և բայի միջև:

68 **Բնութագրումներից ո՞րը գրական որ ժանրին կամ տեսակին է վերաբերում:**

- | | |
|---|-----------------------|
| 1. Փոքր ծավալի արձակ ստեղծագործություն է, որտեղ դեպքերն ունենում են սուր ընթացք և անսպասելի ավարտ: | ա. քնարական պոեմ |
| 2. Գրամատիկական ժանր է, որը միջին տեղ է գրավում ողբերգության և կատակերգության միջև, արժարժում է հոգեբանական խնդիրներ: | բ. նորավեպ |
| 3. Չափածո մեծածավալ ստեղծագործություն է, որտեղ կա դիպաշար. այդ դիպաշարը ուղեկցվում է հեղինակային միջամտություններով: | գ. դրամա |
| 4. Քառատող բանաստեղծություն է, որն ունի ավարտուն միտք և փիլիսոփայական բովանդակություն: | դ. քառյակ |
| 1) 1-բ, 2-գ, 3-ա, 4-ե | ե. քնարաէպիկական պոեմ |
| 2) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա | |
| 3) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ | |
| 4) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ | |

69 **Բառերից քանիստ՞ւմ ածանցի հնչյունափոխություն կա.**

ներկայացուցչություն, վարչություն, վարձատրել, գերապատվություն, տեսչական, ուսուցչություն, կառուցապատում, բնութագրական, նկարչական, միջնապատ, մատուցարան, ժողովրդական, վերջնագիր, շառագունել, մշակութային, գրչատուփ:

70 **Քանի՞ քառագույգեր են իրար հականիշ.**

հոռետես-լավատես, փորձանք-հաջողություն, դիրտ-մրուր, պարծենկոտ-համեստ, երախտագետ-անշնորհակալ, ակնդետ-անքթիթ, ծանուցել-իրազեկել, ակադճուն-լի, պիրկ-թույլ, ուսյալ-իմաստակ, ուխտել-ապխտել, մարմնեղ-գեր:

71 **Նախադասություններից քանիստ՞ւմ կետադրական սխալ կա:**

- Բոլորն արդեն գիտեին՝ պատվավոր հյուրը ժամանում է, և պատրաստվում էին ըստ պատշաճի դիմավորելու նրան:
- Միակ ուղևորը, որը լռելյայն նստած լաստանավի աջ եզրին, մի ձեռքով խաղում էր կապույտ կոհակների հետ, նկարիչ Փանոս Թերլեմեզյանն էր:
- Տասներեքերորդ դարում՝ օրըստօրե փթթող Անի քաղաքում, ապրում էր մի իշխան՝ Անանիա անունով:
- Փոքրիկներից ութ-իմը քայլ հեռու՝ հինավուրց տան շենին, նստած էր մի երիտասարդ կին՝ գույնզգույն զգեստով. նա այդ երեխաների մայրն էր:

72 **Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարբերակների քվահամարները:**

Ես շարունակ նայում էի հետ, ինչպես մերձավորներից բաժանվող աքսորական, որ հույս չունի երբևէ նրանց կրկին տեսնելու:

- երբևէ** - անորոշ դերանուն, **տեսնելու** - անորոշ դերբայ, ածանցավոր
- ես** - անձնական դերանուն, ուղղական հոլով, **շարունակ** – ածական
- նայում էի** - բաղադրյալ ժամանակածև, անկատար անցյալ, **հետ** – կապ, հետադրություն
- ինչպես** – կապ, **բաժանվող** - ենթակայական դերբայ, ածանցավոր
- որ** – ստորադասական շաղկապ, **հույս չունի** – հարադիր բայ, ներգործական սեռ

7 **Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.**

- ՄՇՈ «ՃԱՌԸՆՏԻՐ», ԱՇՈՏ Բ ԵՐԿԱԹ, ԱՐՇԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ՆՈՐ ՏԱՐԻ
- ՆՈՐ ՁԵՅԹՈՒՆ, ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ, ԱՌՅՈՒԾԱՉԵՎ ՍՀԵՐ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ
- ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՍ, ՍԱՍՈՒՆՅԻ ԳԱՎԻԹ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, ՉՈՐԻ ՄԻՐՈ
- ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱԲՈՒ -ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ, ԿԱՐՄԻՐ ԾՈՎ, ՋԻԲՐԱԼԹԱՐԻ ՆԵՂՈՒՑ

8 **Ո՞ր շարքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա.**

- կտրել, հարցուփորձ, թանձրանալ, տնանկ
- անթացույ, մանկամիտ, մանրախնդիր, ընչացք
- ընչաքաղց, նյարդայնանալ, ընդդեմ, քառամյա
- բազմապիսի, երկվորյակ, խաժական, համալսարան

9 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

- Ավանդությունը մեզ է փոխանցել այս պատմությունը հերոս իշխանի մասին:
- Ակումբներում հանգան վերջին կրակները, և վրանախումբը ընկղմվեց խավարի մեջ:
- Դժվար էր առանց սարսուռի նայել հողածածկ այդ խուղերի մեջ բնակվող մարդկանց դեմքերին:
- Հայ ժողովուրդն իր խորին երախտիքն է հայտնում Ֆրանսիային՝ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու համար:

10 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ չկա:**

- Կուսական անտառի օրորուն երգի տակ ազատ թռչկոտող եղնիկի վճիտ հայացքի արտապատկերն է դա:
- Այդ ճանապարհը, թեև քաղաքի փեշով է անցնում, բայց չի տարբերվում գյուղի մյուս ճանապարհներից:
- Իմ հիշողության մթագնած հորիզոնի վրա ցցվում է դաժան մի պատկեր. դժվարությամբ եմ ճանաչում դիրքը, կապակցում մարդուն ու շրջապատը:
- Քարերը գլորվում էին դեպի խորխորատները, և նրանց աղմուկից ճերմակափետուր աղավնիները անհանգիստ ճախրում էին:

11 **Ո՞ր շարքի բոլոր բառագույգերն են հոմանիշներ:**

- հանգույն - գույնզգույն, արագահոս - սրընթաց, առեղծված - հանելուկ, բարձրորակ - առաջնակարգ
- կողմնակալ-աչառու, առընթեր - կից, արձանանալ - անշարժանալ, բարկանալ - սրդողել
- անգուգական - անմման, բարձրաբերձ - երկնաքերձ, խափշիկ - խարտյաշ, բանասարկություն - սաղրանք
- խկույն - անմիջապես, բաղդատել - բաժանել, առերես - արտաքուստ, անհիշաչար - անքինախնդիր

- 12 **Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդ:**
- 1) ստնտու, սոխակաճայն, արծվաքիթ, կռունկերամ
 - 2) ջլաբագուկ, պարուրածև, որսատուպրակ, ձյունապսակ
 - 3) աշնանաձաղիկ, հստակամիտ, ներբողագիր, հրուշակավաճառ
 - 4) նկուղահարկ, կանխագուշակ, ջերմուկաբույժ, ծիրանավառ

- 13 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում ա ներքին հոլովման:**
- 1) եռանկյուն, կորյուն, հեռագրատուն, շուն
 - 2) սյուն, շարժում, տուն, ուրախություն
 - 3) գարուն, խաբեություն, հայրանուն, շարասյուն
 - 4) արյուն, անկյուն, անուն, քավություն

- 14 **Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդ կա:**
- 1) Կարծես շատ է քիչ աշխարհիս հողը, Որ մարդիկ մեռնում ու հող են դառնում:
 - 2) Շնորհի՛ր կրկին ողորմությունդ լքածիս անօգ, Ամենապարզև տերդ բոլորի...
 - 3) Մի ծաղիկը ծիածան չէ, յոթ գույնով էմ ես ցնծում, Ես մեղուն եմ... Ողջ ազգերը ծաղիկներս են ծաղկոցում:
 - 4) Թո՛ղ թափառիկ հովերը պիղծ, մարմնիդ ճամփով մի՛ գնա, Վերադարձիս սրտիդ ճամփով, որ ողջ սիրտս քեզ մնա...

- 15 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**
- 1) բեռնատարներ, պատճեններ, փառատոներ, ուղեցույցներ
 - 2) տեսակետներ, բանասերներ, գործատեղեր, դեղահաբեր
 - 3) օրինագծեր, ստորակետեր, ծովեզրեր, ընչացքներ
 - 4) սպաներ, չարագործներ, տոնածառեր, չվերթեր

- 16 **Ո՞ր նախադասության մեջ գոյականաբար գործածված ածական կա:**
- 1) Եվ հավիտյան էլ մնացին քնած՝ Դավին անտեղյակ, ցավին անտարբեր...
 - 2) Ատում եմ, ավաղ, և հայրենիքը՝ պերճ արոտավայր հարուստների ցոփ...
 - 3) Միրում եմ աչքերիդ տխրությունը խորին, Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ...
 - 4) Աղբյուրները հնչում են ու անց կենում, Ծարավները տենչում են ու անց կենում...

- 17 **Քանի՞ տեսակ դերանուն կա տրված բանաստեղծական հատվածում:**
- Բուքն է գալարվում խրոխտ ու արի,
Դաշտով սուրում է կառքը օտարի,
Այդ կառքում օտար մի ջահելություն,
Ո՞ւր ես դու, բախտ իմ, ո՞ւր ես, խնդություն:
Ամեն ինչ կորավ բութի գալարում,
Հենց մի այսպիսի կատաղի կառքում:
- 1) վեց
 - 2) երեք
 - 3) չորս
 - 4) հինգ

- 65 **Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են կիրառված:**
- Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղիկներն այնպես նագով են փակվում,
-Շուրջս վառված է մի անուշ տազնապ,
Մի նոր հուզում է սիրտս մրրկում...
1. մակդիր
 2. շրջադասություն
 3. փոխաբերություն
 4. համեմատություն

- 1) չորսը
- 2) մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

- 66 **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարբերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**
1. Եգիպտական այս առեղծվածային կոթողի վեհապանձ ուրվագիծը անբաժան է քարակոփ բուրգերի վիթխարի համայնապատկերից:
 2. Աշխարհի յոթ հրաշալիքներից մեկից՝ Քեոփսի բուրգից, չորս հարյուր մետր հեռու գտնվում է ամենամեծ սֆինքսը:
 3. Հինավուրց մի ավանդություն ասում է, որ նրա խստահայաց դեմքը Թեֆրեն փառավոնինն է:
 4. Դա մի հսկայական քանդակապատկեր է՝ առյուծի սարսռագրու մարմնով, ծանր ու գորեղ թաթերով, բայց մարդու գլխով:
- 1) 3, 1, 2, 4
 - 2) 2, 4, 3, 1
 - 3) 2, 3, 4, 1
 - 4) 2, 3, 1, 4

- 67 **Արևելահայ քնարերգության մեջ ո՞վ առաջինը իր բանաստեղծությունները դասավորեց շարքերի մեջ:**
- 1) Վահան Տերյանը
 - 2) Եղիշե Չարենցը
 - 3) Ավետիք Իսահակյանը
 - 4) Պարույր Սևակը

62

Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս (երկրորդական) նախադասությունների պաշտոնները:

1. Թեև հազիմ ռազմական հանդերձանք էր, սակայն դա բնավ չէր նսեմացրել նրա կանացի թովչանքը:
2. Թե հնար լիներ գտնել ձեռագիր մատյանների և մեղեդու գունային համապատասխանությունը, կստանալինք նրբահյուս մանրանկարների և զարդերի ձայնաշարեր:
3. Նա պարզ տեսնում էր, որ իր հրապույրը մարդկանց աչքում պայմանավորված է մեծ մասամբ իր հարստությամբ:
4. Հենց ծնողների ցանկությունն էլ այն էր, որ նա մոռանար արտասահմանում կրթությունը շարունակելու մասին:

- ա. պայմանի պարագա
- բ. ժամանակի պարագա
- գ. ուղիղ խնդիր
- դ. ստորոգելի
- ե. զիջման պարագա

- 1) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ
- 2) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ
- 3) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
- 4) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ

63

Ժխտական նախադասություններից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Նրանց ստեղծածը տեսական մտքի ստվերային կողմը չէ ներկայացնում:
- 2) Նա այնքան եսասեր չի, որ այդ դժվար պահին չմտածի իր մտերիմների մասին:
- 3) Դ-ա հայոց ստեղծարար, անկոտրում ոգու ձայնը չէ միջնադարի գորշ ու դժվարին ժամանակների մեջ:
- 4) Նա համոզված էր, որ իր կայացումը դեռևս ավարտված չի:

64

Ո՞ր նախադասության մեջ ստորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Վրանները հավաքելուց և հեռանալուց հետո Մարգարը երկու միտք ուներ Թորոսիկին պահել և ծիրանի կորիզները պահ տալ մի ապահով հողում:
- 2) Հանկարծ ծոցից հանելով տետրը սպիտակ թղթի վրա մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը օջախի մոտ նստած աչքերը օջախի քարին:
- 3) Նրան թվաց ֆետրե գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամեն ինչ ինչպես աղբյուրի վճիտ ջուրը:
- 4) Եթե արևը չխոնարհվեր դեպի մայրամուտ նա առանց հոգնության երկար կմնար այդ դիրքով և չէր հագնեա մրգերը քաղած և արդեն դեղնող ծառերի սոսափից:

18

Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) ըմբոշխնեցին, թիավարում ենք, կժամանեն, իմաստավորում են
- 2) ամրապնդում է, ավերեցին, կորավ, գալիս եմ
- 3) վայելե՛ք, տասնապատկել են, ա՛ռ, թվացող
- 4) հեռանամ, եկել է, կխոսի, ապացուցել

19

Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) Երկհարկանի տան կողքին մշուշի միջից ցցվում էին բարձր սյուները:
- 2) Երբ գետը վարարում է, կոճղեր է իրեն բերանն առնում, գազազած բաշը մեկ այս ափին տալիս, մեկ՝ այն:
- 3) Այդ գարնանը ձյունը դժվար հալվեց. գյուղի մի մասը դեռ ծածկված էր ձյունով:
- 4) Բոլոր իրերն իրենց կարճ ու գորշ պատմությունն ունեին, բացի ծաղկամանից:

20

Փակագծերում տրված բառերի ձևափոխության և նախադասության մեջ տեղադրման ո՞ր տարբերակն է ճիշտ:

Պերիկլես արքայի հետ Ֆիդիասի սերտ կապ ----- վատ անդրադարձավ հենց -----՝ քանդակագործի ճակատագրի վրա, և արքայի քաղաքական ----- քանդակագործը - -----անաստվածության և հափշտակություններ կատարելու մեջ:
(ինքը, հակառակորդ, ամբաստանել, ունենալ)

- 1) ունենալը, իր, հակառակորդներից, ամբաստանվեց
- 2) ունենալով, իր, հակառակորդներին, ամբաստանեց
- 3) ունենալուն, իրեն, հակառակորդներից, ամբաստանում էր
- 4) ունենալուն, նրա, հակառակորդներին, ամբաստանվեց

21

Ո՞ր նախադասության մեջ մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Դ-ու մոտեցար որպես քույր
Ու հեռանում ես ահա...
- 2) Որպես փյունիկ կրակից կելնես կելնես նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:
- 3) Դ-ու որպես արքա ու արդարադատ տեր
Այսօր դատավոր եղիր մեր միջև....
- 4) Որպես նենգ մի հյուր սողոսկել ամբոց լոկ կեղտոտ դավեր նյութելու համար:

22


Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարբերակը:

Ես, որ աշակերտել եմ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:

- 1) Թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտելով հանդերձ ես հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 2) Թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտած լինելով՝ հայրենիքում ես անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 3) Չնայած թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտած լինելուս՝ հայրենիքում ես անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 4) Ես՝ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտածս, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:

23 Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Թեև մենք իրարից մինչև օրս գաղտնիք չունեինք, բայց վերջերս զգալի կերպով նա լռակյաց էր դարձել, խուսափում էր խոսել այն զգացմունքների մասին, որ բռնկվել էին իր հոգում:



24 Նախադասություններից քանիստ՞նք տրոհվող հատկացուցիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

1. Մրրիկը թեև վտանգավոր չէր սակայն ծովաջուրը առատորեն հոսում էր հակերի վրայով և տախտակամածի տարերքից առաջացած ճեղքերից թափվում թիավարների թիկունքին:
2. Լուսամուտի թրջված ու խունացած գոգին այրվող մարխն իր կարմիր շողերը սփռել էր Ոսկանի առջև բացված հսկայական գրքի և ամիլված կլոր գլխի վրա:
3. Անցնելով ամառի բակով նա ուղղվեց դեպի հարավային դարպասը սիրտը թրթռում էր քիչ առաջ ձեռք բերած իր տարիներով երազած երջանկությունից:
4. Պատուհանների մետաքսյա ծոպավոր վարագույրները վեր էին բարձրացված և երևում էր ամբողջ պարտեզը:

- 1) չորսում
- 2) մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

25 Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Երբեմն նա դիտում էր բնությունը՝ հոգեթով ու զմայելի, և մտածում էր հավերժ ծուլվել այդ անհունությանը, միանալ նրա յուրաքանչյուր տարրին:
- 2) Թե ում էի պարտական իմ փրկության համար՝ ես այդպես էլ չիմացա, բայց այդ միտքն ինձ երկար ժամանակ տանջում էր:
- 3) Եվ ամեն օր հոգու թրթիռով նայում էր աշխարհին և ամեն օր զարմանում. կարծես առաջին անգամ էր տեսնում աշխարհը:
- 4) Ձիավորները լուռ էին. ամեն մեկը տարված էր իր մտքերով կամ գուցե լսում էր ձիերի դուփյունը:

26 Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին,
 Բա՛րձր, բա՛րձր,- հեռավոր ու մենավոր.
 Այնտեղ՝ ցածում, դեռ նիրհում են դաշտ ու ձոր,
 Գեռ խավար է այնտեղ դաժան ու լռին:

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) փոխաբերություն
- 4) շրջադասություն

57 Ո՞ր նախադասության մեջ ստորադասական շաղկապ չկա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Քուն թե արթուն օրիս շատը երազ եղավ անց կացավ ...
- 2) Թե ուզում ես երգի լսեն ժամանակիդ շունչը դարձիր:
- 3) Չարմանում եմ թե ով Շռայլ Ինչքան շատ ես տվել ինձ ...
- 4) Ինչը կհաղթի կյանքում հերոսին Թե չլինի կինն ու զինին...

58 Տրված նախադասության ստորոգյալը ի՞նչ ժամանակաձևով է արտահայտված:

Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր,
 Բնքուշ ու տրտում որպես իրիկուն:

- 1) ենթադրական անցյալ
- 2) ըղձական անցյալ
- 3) անկատար անցյալ
- 4) անցյալ կատարյալ

59 Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Բոցը հասավ դեղնած արտերին, կրակը լափեց և՛ սերմ, և՛ սերմնացան:
- 2) Հագրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:
- 3) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
- 4) Եղան բռնություններ, թշնամին ձորերով բարձրացավ մինչև նրանց խեղճ խրճիթները:

60 Ո՞ր նախադասության մեջ անուղղակի խնդիր չկա:

- 1) Հանկարծ մրրկաշունչ կայծակը չոր ճաթյունով բախվեց ժայռին, շարվեց մի կողմ և թաղվեց գետնի մեջ:
- 2) Անկեղծության պահերին միշտ ներողություն էինք խնդրում մեզնից նեղացողներից:
- 3) Միրհավը, հանգիստ քուջուջ անելով, փոխում էր արնագույն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները:
- 4) Հագրոյի հայրենիքը եղել էր քարոտ Սասունը՝ այդ խուլ երկրի ամենախուլ անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր, լեռների գագաթները՝ ապառաժներ:

61 Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

- Սմբա՛տ, դու պետք է ներողություն խնդրես ինձնից քո անվայելույ աբարքի համար, - ասացի ես:

- 1) Ես ասացի, որ Սմբատը թող ներողություն խնդրի ինձնից իր անվայելույ աբարքի համար:
- 2) Ես ասացի Սմբատին, որ նա պետք է ներողություն խնդրի ինձնից նրա անվայելույ աբարքի համար:
- 3) Ես ասացի, որ Սմբատը պետք է ներողություն խնդրի նրանից իր անվայելույ աբարքի համար:
- 4) Ես ասացի Սմբատին, որ ինքը պետք է ներողություն խնդրի ինձնից իր անվայելույ աբարքի համար:

51 Համարակալված բառերում բաց թողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված.

Ասում են՝ հարյուրավոր տարիներ առաջ մի աշխարհ կար՝ տա-ագույն(1) ծաղիկներով, թ-թռուն(2) ու ոսկեթև թիթեռներով, թ-վռան(3), կարկաչ-ն(4) գետերով, զվար- (5), սառնորակ աղբյուրներով, որոտ-նդոստ(6) ջրվեժների շառաչ-նով(7): Լուրթ երկնքում թևածում էին սիգապան- (8) արծիվները, վարդի թ-ուսներում(9) թռչուններն էին ճռվողում, մեղուները բ-ալով(10) թռչում էին ծաղկից ծաղիկ:

- 1) 1 - ր, 2 - ն, 3 - ր, 4 - ու, 5 - թ, 6 - -, 7 - յու, 8 - ծ, 9 - պ, 10 - զզ
- 2) 1 - րր, 2 - ր, 3 - ն, 4 - ու, 5 - դ, 6 - ը, 7 - յու, 8 - ծ, 9 - փ, 10 - զզ
- 3) 1 - ր, 2 - ր, 3 - ն, 4 - յու, 5 - թ, 6 - ը, 7 - ու, 8 - ձ, 9 - փ, 10 - զ
- 4) 1 - ր, 2 - ր, 3 - ն, 4 - ու, 5 - թ, 6 - ը, 7 - յու, 8 - ծ, 9 - փ, 10 - զզ

52 Ո՞ր տարբերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ԲՆԼԷ -5327
- 2) ՉՉՁ- 785
- 3) ՓՁԽԴ -8934
- 4) ՄՆՉԱ-2481

53 Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:

- 1) տվնջյան, տրամաբանել, քստմնելի, օրհնել
- 2) աննշմար, անընտել, մրրկող, կարծր
- 3) տվյալ, ճշտություն, գաղտնավանկ, կրկնապատկել
- 4) չքնադակերտ, վրիժառու, սանրվածք, տտիպ

54 Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) շաղափել - անցք բացել, երիցս - երեք անգամ
- 2) պարս- մեղուների խումբ, անսալ - լսել
- 3) արքա - բրդյա կտոր, ի հեճուկս - հակառակ
- 4) առեղծված - անհասկանալի բան, խարազան - կաշվե մտրակ

55 Ո՞ր շարքի բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) հետաքննիչ - հետ, քնին՝ արմատներ, իչ՝ վերջածանց, ա՝ հոդակապ
- 2) հեղուկագրկում - հեղ, գուրկ՝ արմատներ, ուկ, ում՝ վերջածանցներ, ա՝ հոդակապ
- 3) սննդամթերք - սուն, մթեր՝ արմատներ, ունդ, ք՝ վերջածանցներ, ա՝ հոդակապ
- 4) ստնտվություն - սուտ, տու՝ արմատներ, ություն՝ վերջածանց

56 Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) թիկունք թիկունքի տալ - իրար օգնել, ոտքերն ընկնել - աղաչել, ձեռք չտալ - հարմար չլինել
- 2) լեզուն կարճ - հնազանդ, իրեն հավաքել - զգաստանալ, դարձի գալ - ճիշտ ուղու վրա կանգնել
- 3) մարմին առնել - իրականանալ, կուրծք ծեծել - հավատացնել, ոտքի տակ ընկնել - խանգարել
- 4) կողի ընկնել - համառել, հաց կտրել - ապրուստից զրկել, ճանապարհ սովորեցնել - խորհուրդ տալ

27 Ո՞ր բարբառի հիման վրա է ձևավորվել գրական արևմտահայերենը:

- 1) Խոյի
- 2) Մարաղայի
- 3) Պոլսի
- 4) Կարնո

28 Ի՞նչ առիթով է գրված Մովսես Խորենացու «Ողբը».

- 1) Հայաստանի՝ 387 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանման
- 2) իր անհամար ու ծանր մեղքերի գիտակցման
- 3) Հայոց Արշակունի թագավորության ու կաթողիկոսության անկման
- 4) Աստծու մեծությանը ձգտելու և չհասնելու տառապանքի

29 Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Անկար հիվանդիս մի՛ մահացրու,
Մի՛ ծանրաբեռնիր թույլ ու տկարիս.
Մի՛ ավելացրու ծանր անուրներ թիկունքիս կարկամ,
Դառն հեծեծանքիս՝ նորանոր ողբեր:

- 1) «Տաղ անձնական», Եղիշե Չարենց
- 2) «Հին աստվածներ», Լևոն Շանթ
- 3) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 4) «Աբու-Լալա Մահարի», Ավետիք Իսահակյան

30 «Մասնա ծռեր» էպոսի («Մասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

Ես էստեղ մստեմ, կերուխում անեմ,
Մըսրա Մելիք Դավթին գերի՞ պահի:
Բա ամոթ չէ՞ մեզի...
Հացն ու գինին, տեր կենդանին,
Չոր էդա որբ հետ չը բերեմ,
Ես բաժակ իմ բերան չ՛առնեմ:

- 1) Վերգոյի
- 2) Արմաղանի
- 3) Քեռի Թորոսի
- 4) Խանդութի

31 Մայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

Չըտեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունեն բաշ, նազանի,
Թէ խամ հաքնիս, թէ գար հաքնիս, կու շինիս դումաշ, նազանի,
Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նազանի:

- 1) «Աշխարումս ա խ չիմ քաշի»
- 2) «Թամամ աշխար պըտուտ էկա»
- 3) «Աշխարս մե փանջարա է»
- 4) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»

32 **Խաչատուր Աբովյանի նշված ստեղծագործություններից ո՞րը ինչ ժանրի է:**

- | | |
|--------------------------|-------------|
| 1. «Հազարփեշեն» | ա. վեպ |
| 2. «Վերք Հայաստանի» | բ. պատմվածք |
| 3. «Պարսպ վախտի խաղալիք» | գ. պոեմ |
| 4. «Թուրքի աղջիկը» | դ. առականի |

- 1) 1- բ, 2 - դ, 3 - ա, 4 - գ
- 2) 1- ա, 2- գ, 3 - դ, 4 - բ
- 3) 1- դ, 2 - ա, 3 - բ, 4 - գ
- 4) 1- գ, 2 - ա, 3 - դ, 4 - բ

33 **Սամվելը Բաֆֆու համանուն պատմավեպում ինչպե՞ս վարվեց վիրավոր Մերուժան Արծրունու հետ:**

- 1) Սամվելն իր գինակիցներին կարգադրեց մինչև իր վերադարձը վահաններով պահպանել վիրավորին, իսկ ինքն աճապարեց դեպի հոր շիկակարմիր վրանը:
- 2) Կարգադրեց խարույկի վրա շիկացնել մի կաթսա և այն դրեց Մերուժանի գլխին՝ իբրև հայոց թագ:
- 3) Անսալով վիրավորի աղերսանքներին՝ սրի մի հարվածով սպանեց նրան:
- 4) Մերուժանի երեսին նետեց արհամարհանքի ու ատելության խոսքեր, խթանեց նժույզն ու սուրաց առաջ:

34 **Նշված շարքերից ո՞րը Գանիել Վարուժանի «Ցեղին սիրտը» ժողովածուից չէ:**

- 1) «Դյուցազնավեպեր»
- 2) «Գողգոթայի ծաղիկներ»
- 3) «Բագինին վրա»
- 4) «Կրկեսին մեջ»

35 **Եղիշե Չարենցի «Հեռացումի խոսքեր» բանաստեղծության տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ:**

1. Երգերիս մեջ - դու գիտե՞ս - ինձ ոչ ոք չի ճանաչում
2. Աննպատակ ու տարտամ, անմխիթար ու անհույս
3. Կյանքս կանցնի, կմարի, որպես կրակ ճահիճում
4. Կարծես ուրի՛շն է երգում կապույտ կարոտը հոգուս

- 1) 2, 4, 1, 3
- 2) 1, 2, 4, 3
- 3) 3, 2, 1, 4
- 4) 3, 4, 2, 1

49 **Նշի՞ր այն հատվածները, որոնք արևմտահայերեն են.**

- 1) Ոչ ոք ըսավ. «Սա տղին Պատռենք սիրտը տրտմագին, Նայինք՝ ինչե՛ր գրված կան...»:
– Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան:
- 2) Եղեգնյա գրչով երգեցի արյուն.
– Ձեզի ընծա՛, սուրի գոհեր–
- 3) Ձեզանից հետո եկավ գիտություն՝
Յուր ծանր հայացքով աշխարհի վերա,
Ամեն բան ընկավ մտածության տակ,
Բոպե չմնաց ազատ կամ ունայն:
- 4) Մանգաղս քարին եկավ.
– Յարս յար ունի–
Քարեն լորիկը թռավ:
– Լե՛րդս կ’արյունի: –

50 **Հովհաննես Թումանյանի «Հայոց լեռներում» բանաստեղծության վեցատողերի վերջին բառակապակցությունները դասավորել ըստ բանաստեղծական տների հերթականության:**

1. Սուգի լեռներում, 2. Կանաչ լեռներում, 3. Գրժար լեռներում, 4. Արնոտ լեռներում, 5. Բարձր լեռներում:

47 **Նշել այն նախադասությունների քվահամարները, որոնցում մեկից ավելի բուժ պետք է դրվի:**

1. Կարծես ծանր աշխատանքից հոգնաբեկ նա աչքերը դարձրեց դեպի Սեդան որը ձեռքերը կրծքին խաչած լուռ անէացած շրջապատից նայում էր հեռուն:
2. Նա ասում էր ամենից ավելի ինքն է սիրում Լուիզային և ամենից առաջ ինքն է ուզում ծափահարել Լուիզային բեմի վրա բայց ոչ այստեղ Օդեսայում այլ այնտեղ Իտալիայում:
3. Նա է նա ինքը որովհետև նույն հնչյուններն են այս անգամ արդեն առնականորեն հարուստ, նաև վեհասլաց:
4. Մեկ ամիս անց Տիգրանից եկավ մի նոր բարձրաստիճան սուրհանդակ հայտնելու արքայից արքան իր քաղաքն է հրավիրում նաև տիկին Փառանձեմ թագուհուն:
5. Միակ մարդը որ կողմնակից էր պարսից արքայի հրավերն ընդունելուն Հայր Մարդպետն էր պալատի և թագավորական տան կալվածքների կառավարիչը:
6. Թագուհին դիմեց դեպի նեղ կամարակապ պատուհանը որ նայում էր Գեղա լեռան բարձունքներին և որտեղից մեղմ սյուրն էր մտնում սենյակ կարծես հովացնելու թագուհու հուզմունքից այրվող հոգին:

48 **Նշիր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Իսկ ճապոնական բալետին՝ սակուրան, որ ծաղկում է մարտի վերջերին ու ապրիլի սկզբներին՝ ցուցադրելով հրաշագեղ գունային համակցություններ, իր ծաղկումով ազդարարում է սակուրայի գույներով զմայլվելու տոնի սկիզբը՝ Խանամին: Ծառի ծաղիկներով հրապուրվում են, ինչպես աշխարհում ոչ մի ուրիշ ծաղկով: Այն համարվում է ազգային հպարտություն:
- 2) Բացի այդ, Ճապոնիան անվանում են երկրաշարժերի երկիր. միջին հաշվով այստեղ տեղի է ունենում օրական երեք երկրաշարժ՝ նախաճաշին, ճաշին և ընթրիքին, ինչպես սիրում են կատակով ասել ճապոնացիները: Բայց ցնցումների մեծ մասը շատ թույլ է, և միայն սարքերն են կարողանում գրանցել:
- 3) Եթե երկրի դրոշը՝ սպիտակի վրա կարմիր սկավառակը, խորհրդանշում է արևը, ապա զինանշանի հարցում ճապոնացիները ավելի քիչ նախաձեռնող են եղել: Ընդունված է որպես զինանշան ներկայացնել կայսերական տոհմի նշանը՝ դեղին քրիզանթեմը, որը բաղկացած է 16 կրկնակի թերթերից. այն կրկին արևի խորհրդանիշն է:
- 4) Ճապոնացիներն իրենց երկիրն անվանում են Նիպպոն, որ թարգմանաբար նշանակում է Ծագող արևի երկիր: Ինչպես վկայում է հնագույն լեգենդը, արարիչ աստվածն իր նիզակը խրել է օվկիանոսի հատակը, և արևի տակ պսպղացող կաթիլները վերածվել են Ճապոնական կղզիների:

36 **Նաիրի Չարյանի «Արա Գեղեցիկ» ողբերգության մեջ ո՞վ է անիծում Շամիրամին՝ ասելով.**

Ես անիծում եմ քեզ և ցեղըդ ամենայն,
Դուք սեր տարաք մեզնից, բերիք ատելություն,
Մենք ձեզ հավատարիմ եղանք, իսկ դուք՝ դրուժան.
Ուստի թո՛ղ կործանվի Ասորեստան,
Ձեր տեղը թո՛ղ մոխիր մընա և լոկ անուն՝
Իբրև պագռտության խորհրդանիշ:

- 1) Արքայամայրը
- 2) Վաշտակը
- 3) Նուարդը
- 4) Կաթմոսը

37 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

...Նրանից առաջ կային աստվածներ՝
Երկրների, սիրո, պտղավորումի,
Ինչպես փոթորկի, նաև... դպրության:

Եվ բոլորը՝ մինչևիսկ ստույգ,
Վերջինըս սուտ էր, սուտ ստուգապես.
- Աստված կար, սակայն դպրություն չկա՛ր:
Նա՛ հավատավորն իր նոր հավատի,
Դպրության մեր սուտ աստծուն վրձնդեց
Եվ Ինքը մնաց նրա փոխանակ:

- 1) Գանիել Վարուժան, «Հարճը»
- 2) Պարույր Սևակ, «Անլռելի զանգակատուն»
- 3) Պարույր Սևակ, «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»
- 4) Լևոն Շանթ, «Հին աստվածներ»

38 **Ի՞նչ վախճան է ունենում Մեծ տիկինը Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպում:**

- 1) Վշտից ու ծերությունից ուժասպառ՝ մահանում է Ավարայրի դաշտում:
- 2) Ինքնասպան է լինում՝ առնելով որդու մահվան լուրը:
- 3) Խելագարվում է՝ իմանալով Վարդանի մահվան մասին:
- 4) Հազկերտի հրամանով նրան էլ պատերազմից հետո ձերբակալում են և ուղարկում Տիգրոն:

39 **Տրվածներից քանի՞սն են գրվում միասին.**

հետ(կանչել), մարտ(արվեստ), ազդր(ոսկր), մակ(երիկամ), գրուց(ընկեր),
առ(հասարակ), աներ(որդի), թույլ(տվություն), բուժ(օգնություն), ծառս(լինել), հև(ի)հև,
հետ(գրություն), խտտ(հարք), թերի(բարձրագույն), խաչ(քար), երկաթ(գիծ):

40 **Բառերից և բառաձևերից քանիսի՞ վերջին վանկը չի շեշտվում.**

մաթեմատիկայով, սիրտ տալ, մարգարիտ, մաքրություն, զարթոնք, հողմեր, ուրիշ, սպեղանի, նկարակալ, աշակերտական, քանիերորդ, արեգակ, անգլերեն, պատշգամբ:

41 **Տրվածներից քանիստ՞ւմ է *խոսք առնել* դարձվածքի իմաստը սխալ մեկնաբանված.**

լռեցնել բոլորին, մեկի համաձայնությունը ստանալ, խոսելու համար թույլտվություն ստանալ, ամուսնանալու համաձայնություն ստանալ, մեկի փոխարեն խոսել:

42 **Բառերից քանի՞սն են *հոդակապով*.**

ուղեկցորդ, վրիժառու, ձայներիգ, փոթորկահույզ, որոտընդոստ, փառատենչ, հպատակ, բարեգութ, անարգանք, շնորհակալ:

43 **Ընդգծվածներից նշել ապակատար դերբայների քանակը:**

1. Արժե՞ր, որ այդքան ժայռեր փշրեիր
Քարքարոտ մի հուն **մտնելու** համար,
Պարզ ու նախնական
Մի ճշմարտություն **կրկնելու** համար:
2. Արժե՞ր, որ այդքան դու քեզ քրքրեիր,
Երբ որ ուժերդ չէին **ներելու**՝
Քո իսկ էության
Փախած բևեռներն իրար **բերելու**:
3. Երբ ամպրոպի պես չէիր **պայթելու**,
Չէիր **վանելու** այս մեղկ մարդկության
Եվ մարդու մեղքերն աշխարհից հեռու,
Արժե՞ր, որ այդքան դու որոտայիր:
4. Խոնարհվիր նրանց շիրմաքարերին,
Ով գնաց, գնաց, էլ ետ չի **գալու**,
Ու եկողներն էլ խորհուրդ չեն **տալու**,
Փնտրել անհնարն ու անկարելին:
5. Ու բաժանվելիս տխրենք ես ու նա,
Ինքը հոտոտի հետքերը ներու
Կամ իր վիթիկին կուրծք **տալու** գնա,
Ես գնամ նորից՝ ինձ **որոնելու**:

44 **Ընդգծվածներից նշել ըղձական եղանակի բայաձևերի քանակը:**

1. Գլուխներս առած գնում ենք այսպես,
Մինչև մոլորված մեր ոտքը **գայթի**,
Եվ **ընկնենք** անտակ անդունդն անհատակ:
2. Մինչև նրանք **հասցնեին**
Հանգուցյալից պատմել մի հուշ,
Չարթնած հավքը **կանչեց** քարին.
Ծնվող օրվա ճիչն էր անուշ:
3. Ինձ **կհիշեն** ամեն անգամ,
Երբ ամպը **թաղքի**,
Եվ քարափի թամբից կախված
Մասրենին ծաղկի:
4. **Գիտեմ**, որ հետ եք գալու
Դուք հոգնած ու լուռ, կռունկներ:
Չտխարեք, թե որ տեսնեք
Իմ տեղը թափուր, կռունկներ:
5. Լուսաբացի թավշյա փեշով **սրբեմ**
Ծիր-կաթինոտ ճակատն իմ Մալվարդի,
Հոգնած իմ տարիքից **չնեղարտեմ**,
Խմեմ պաղ ջուրն ու կաթն իմ Մալվարդի:

45 **Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում որոշյալ դերանուններով արտահայտված ենթակա կա:**

1. Տեսնո՞ւմ ես՝ որքան, որքան արագ
Անցնում է ամեն ինչ ու դառնում հուշ:
2. Բոլորն այսպես թող կրկնվեր,
Եվ չլինեիր վերհուշ մի հին:
3. Ամենքի համար ամեն ինչ արել,
Նստել արածիս վարձին եմ նայում:
4. Ու ճչաց սիրտս վայելքից անկայծ,
Թ՛վաց, թե մեկը կանչում է տրտում:
5. Օրհնենք բոլորը, ինչ էլ որ գա,
Եվ ընդունենք սրտով հոժար,
Գուցե և նա մեր ցավն զգա:
6. Ո՞վ մեր հոգին խոցված
Պիտի փրկե մահից,
Եթե չկա Աստված:

46 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների թվահամարները:**

Միջօրեին տաքանում է հողը, այգեստանները տիվանդորրի մեջ անշարժանում են. գոյանում է կարծես հանճարեղ նկարչի կախարդական վրձնահարվածի մի չնաշխարհիկ բնանկար, և օդը հագնում է հողի ու արևի արբեցնող բուրմունքով:

1. **արբեցնող** – որոշիչ, **բուրմունքով** – միջոցի անուղղակի խնդիր
2. **միջօրեին** – ժամանակի պարագա, **հողը** - ենթակա
3. **տաքանում է** – պարզ ստորոգյալ, **հանճարեղ** – որոշիչ
4. **նկարչի** – հատկացուցիչ, **բնանկար** – ուղիղ խնդիր
5. **կախարդական** – ձևի պարագա, **վրձնահարվածի** – հատկացուցիչ